

.....

Հինգ տարի անցաւ...

Երբ խիղճերը պողոթնացիներն էին հարիւր հազարներ փողոցներ իջան «Բոլորս Հրանդ ենք, բոլորս Հայ ենք» աղաղակելով, իրենց ձեռքով պահած թաքստոցէն հանեցին եւ մեր առջեւ նետեցին պատուիրատու քանի մը մեղադրեալներ ու «Ահաւասիկ, գտանք» ըսին: Եղածը այս է եւ դեռ կ'ուզեն որ հաւատանք:

Այս ի՛նչ տեսակ արդարութիւն է, որ 13-ամեայ Ն.Չ.-ն չափահաս կը համարեն ու զինք բռնաբարողներուն պատիժը կը զեղչեն, 17 տարեկան Էրտալ Էրէնը կախաղան կը տանին եւ Հրանդին սպաննող ոճրագործն ալ երախայ նկատելով կը դրկեն «Մանկանց դատարան»: Դեռ կայ ատելիւն: Գործարարէ մը ստացած պաշտօնական մը լեցուն դրամը Եասին Հայալին փոխանցած ըլլալը մամուլի մէջ հրապարակուած Տրապիզոնի Ոստիկան-գօրաց գնդապետ Ալի Էօզ կը մեղադրուի «պաշտօնի մէջ թերացում»ով: Ո՛չ մէկ պետական պաշտօնեայ կը հարցաքննուի այս խնդրին համար:

Դատավարութեանց ընթացքը՝ ամբողջ հայ ժողովուրդին, Հրանդի ընտանիքին, փաստաբաններուն, ընկերներուն եւ բարեկամներուն անարգանք, իսկ ամէն մէկ նիստ Հրանդին ուղղուած փամփուշտի մը նման էր:

Ափսո՛ս, այս բոլորը չեն զարմացներ մեզ, որովհետեւ գիտենք թէ՛ ոճրագործ պետական համակարգի մը եւ անոր ոճիրները արդարացնող իրաւաբանական համակարգի մը մէջ կ'ապրինք:

Չենք զարմանար, քանի որ գիտենք, թէ հիմնադրման մէջ կան «ցեղասպանութեան» ճարտարապետ իթթիհատականները: Այնպիսի պետութիւն մը, որ յարատեւ տանջած է իր ժողովուրդը: Այնպիսի պետութիւն մը, որ Սեւ Ծովու ալիքներուն մէջ խեղդած է Մուսթաֆա Սուրհին եւ 14 ընկերները: Կազմակերպած է Ունեւորութեան տուրքի նման անարդարութիւն մը: Կիրարկած է 6-7 Սեպտեմբերի վայրագ աւարները: Այնպիսի պետութիւն մը, որ Գոչկիրիի, Բալուի, Ակըրիի, Զիլանի, Սասունի, Օրէմարի, Թոնդրակի, Տէրսիմի մէջ կոտորած է Քիւրտ ազգը: Այնպիսի պետութիւն մը, որ բռնի տեղահանութեան կը պարտադրէ իր ժողովուրդը: Ալեւիներուն կը պատժէ իրենց հաւատքին պատճառաւ: Չանգուածային ջարդեր կը կազմակերպէ Մալաթիոյ, Չորուսի, Մարաշի, Սեբաստիոյ մէջ: Լազերը, Չերքէզները, Արխազները, Ատիկէները, Համշէնցիները, Գնչուները, Բոմաքները եւ Պոշնակները, կարճ խօսքով՝ թուրք չեղող բոլոր ժողովուրդներուն կը պարտադրէ թրքանալ:

Մենք, ո՛չ այս պետական համակարգէն, ո՛չ ալ անոր ներկայացուցիչ՝ ԱԳՓ-ի կառավարութենէն արդարութիւն կը սպասենք:

Իրենց ձեռքերը Հրանդ Տիմքի արիւնին թաթխուած Ծէմիլ Չիչէքը Խորհրդարանի նախագահ կարգող, Մուամմէր Կիլէրը երեսփոխան ընտրող մտայնութենէն Հրանդին համար արդարութիւն չենք մտրար:

17 Յունուարին արձակուած վճիռով տեսանք պետութեան արդարութիւնը: Էրհան Թունճէլ անպարտ հոչակուեցաւ: Օկիւն Սամասթ արդէն մանուկ էր: Այս բոլորը կ'ապացուցեն թէ դեռ չենք անցած 1915 թիւր:

Այսօր Հրանդին բուն ոճրագործները մատնացոյց ընելու, պատերազմի եւ նոր ցեղասպանութեանց պատրաստութիւնները կասեցնելու, ցեղասպանութեան խնդիրը այս երկրի ժողովուրդին բուն ներկայացուցիչներուն պաշտօնավարած Խորհրդարանին առջեւ արտայայտելու համար, Հրանդի

սպանության հինգերորդ տարելիցին՝ 19 Յունուարին, ժամը 15.00-ին հոս
մէկտեղուեցանք:

ԲՈԼՈՐՍ ՀՐԱՆԴ ԵՆՔ, ԲՈԼՈՐՍ ՀԱՅ ԵՆՔ

ԿԵՑՑԷ՛ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ:

Անգարայի Վաստակի եւ Ժողովրդավարության Միություններ